



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՀՈԳԵՅԱՆԳԻՍ Տ. ՍՄԲԱՏ ԱՐՔ. ԼԱՓԱՃԵԱՆԻ ՎԱԽԱՃԱՆԱՎ ՔԱՌԱՍՈՒՄՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տևօրինումով, Կիրակի, 29 Օգոստոսին, Թեմիս բոլոր Եկեղեցիներուն մէջ, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի լուսահոգի Սմբատ Արք. Լափաճեանի յիշատակին, վախճանաման քառասունքին առիթով:

Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ, Ս. Պատարագին պիտի հանդիսաբետէ Առաջնորդ Արքազան Յայրը եւ պիտի նախագահէ հոգեհանգստեան արարողութեան, աղօթք բարձրացնելով առ Աստուած, որպէսզի յախտենական հանգիստ պարգեւէ հանգուցեալ Արքազան Յօր հոգւոյն ու զայն արժանացնէ Երկնքի արքայութեան:

Արարողութիւններէն ետք, Ս. Խաչ Մայր տաճարի հոգեւոր հովիւներն ու հոգաբարձութիւնը կազմակերպած են հոգեճաշ:

## 40<sup>TH</sup> DAY REQUEIM SERVICE FOR ARCHBISHOP SUMBAT LAPAJIAN


By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on Sunday August 29<sup>th</sup>, 2010, requiem service on the 40<sup>th</sup> day of the passing of Archbishop Sumbat Lapajian will take place in all Prelacy churches.

The Prelate will preside over Divine Liturgy and requiem at Holy Cross Cathedral in Montebello.

Following the service there will be a memorial luncheon hosted by the parish pastors and Board of Trustees.

\*\*\*

## ՀԱՆԳԻՄ Տ. ՎԱՀՐԻՃ ԱՒ. ԶՅՆՅ. ԾԻՐԻՆԵԱՆԻ



Ասցեալ շաբաթավերջին, խոր վիշտով հմացանք որ Նիւ ճըրզիի մէջ վախճանած է Յայց. Առաքելական Եկեղեցւոյ արժանաւոր սպասաւորներէն S. Վահրիճ Աւ. Զյնյ. Ծիրինեան:

Յանգուցեալ Տէր Յայրը տասնամեակներ շարունակ ծառայած էր Արեւմտեան Եւ Արեւելեան մէր զոյգ Թեմերուն մէջ:

Ուրբաթ, 20 Օգոստոսին, Ս. Պատարագի ընթացքին, Գեղշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան Կատարեց Վերջին օծումը հանգուցեալ Տէր Յօր, Նիւ ճըրզիի Սրբոց Վարդանական Եկեղեցւոյ մէջ:

Այս տիսուր առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք.

Մարտիրոսեան, յանուն մէր Թեմի հոգեւոր դասուն Եւ Ժողովականութեան, ցաւակցական յատուկ գիր մը յղեց Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեանի, հոգեւորականներուն, Ժողովականութեան Եւ լուսահոգի Տէր Յօր ընտանեկան պարագաներուն ու հարազատներուն:

### IN MEMORIAM ARCHPRIEST FR. VAHRIJ SHIRINIAN

With deep sorrow we learned of the passing of Archpriest Fr. Vahrij Shirinian who entered eternal rest on Saturday, August 14<sup>th</sup>, 2010, in New Jersey.

Fr. Vahrij was a long-time and faithful servant of the Armenian Church, having served for decades within the Eastern and Western United States.

On Friday, August 20<sup>th</sup>, H.E. Archbishop Yeprem Tabakian officiated over the Extreme Unction during Divine Liturgy at Sts. Vartanantz Church.

On behalf of Prelacy clergy and Councils, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, extends his condolences to the Prelate of the Eastern United States H.E. Archbishop Oshagan Choloyan, to the community Fr. Vahrij served for many years, and to his family.

\*\*\*

## ԿԼԵՆՏԵՅԼԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՏԵ ՓՈՄՓԱ ԵՒ ՕԳՆԱԿԱՆՆԵՐ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԻՆ



Երեքաբթի, 17

Օգոստոսի յետմիջօրեին, ժամը 5:30ին, Կլենտեյլի ոստիկանապետ Ռան Տե Փոմփա, ընկերակցութեամբ երկու ոստիկան օգնականներու՝ թու Լորենզի եւ Յարութ Պօզիկեանի, այցելեց Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ:

Յանդիպումին ներկայ եղան Արք. S. Վազգեն Քիև. Աթմաճեան, Ազգային Վարչութեան անդամներեն Տեարք Լեւոն Կիրակոսեան, Կարօ Էշկիան, ճորճ Զօրպաճեան եւ Թորոս Քէչենեան:

Ոստիկանապետն ու ընկերակիցները եկած եին գեկուցում տալու խափանարարական այս դեպքին մասին, որ տեղի ունեցած էր շաբաթ մը առաջ, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շրջափակին մէջ. ծանօթ է որ Եկեղեցւոյ կողքին կանգնող խաչքարը, որ կ'ոգեկոչէ յիշատակը Յայաստանի մէջ քրիստոնեութեան պետական կրօն հոչակման եւ տեղադրուած էր պատմական դեպքին 1700ամեակին առիթով, մեծապէս վնասուած էր Վիքթը Փեթրեսքու անունով երիտասարդի մը անպատասխանատու արարքին պատճառով:

Ոստիկանապետն ու օգնականները ներկայացուցին խափանարարին հարցաքննութեան արդիւնքը, ինչպէս նաեւ անոր մասին յաւելեալ տեղեկութիւններ, նշելով, որ Փեթրեսքու չարագործութեան նախընթաց արարքներով արձանագրութիւն ունի ոստիկանութեան մօտ: Թեեւ քննութիւնները կը շարունակուին, սակայն անոր արարքին մղում տուող որոշ կէտեր բացայատուած են: Ոստիկանութիւնը իր քննութիւններուն ու եզրակացութիւններուն մասին շուտով հաղորդ պիտի պահէ հանրութիւնը:

Առաջնորդ Սրբազանն ու ժողովակիցները յստակ հարցումներ ուղղեցին ոստիկանապետին եւ ընկերակիցներուն, նկատել տալով, որ որոշ տուեալներ ցոյց կու տան, թէ Փեթրեսքուի արարքը կանխամտածուած բնոյթ ունի եւ պատահականութեան, անմիջական հակազդեցութեան մը հետեւանքը չէ: Խորհրդակցութիւն տեղի ունեցաւ նաեւ նման արարքներու մղում տուող այլ պատճառներու մասին, որոնց շուրջ ոստիկանութիւնը կը շարունակէ իր քննարկումներն ու հետապնդումները: Կը թուի, թէ խափանարարութիւնը հետեւանք է ատելութենէ բխող զգացումի (hate crime):

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց ոստիկանապետին՝ տարուած աշխատանքին համար, խնդրելով, որ հաղորդակցութիւնները

շարունակուին, երբ նոր բացայատումներ կատարուին: Իր կարգին, ոստիկանապետը շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազնին, որ համբերութեամբ եւ լայնախոհութեամբ կը հետեւի այս աշխատանքին:

Աւելի ուշ, Չորեքշաբթի, 18 Օգոստոսի յետմիջօրէին, Առաջնորդ Սրբազնը, հեռածայնային հաղորդակցութեամբ մը, ոստիկանապետ Տէ Փոմփայէն տեղեկացաւ, որ ոստիկանութիւնը կապ պահած է ընդհանուր դատախազութեան հետ ու յստակ դարձած է, թէ այս հարցին հետապնդումն ու քննարկումները պիտի կատարուին իբրեւ «ատելութենէ բխած ոճիր» (Hate Crime):

## **PRELATE MEETS WITH GLENDALE POLICE CHIEF RON DE POMPA**

On Tuesday, August 17<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, met with Glendale Police Chief Ron De Pompa and Sergeants Tom Lorenz and Harout Bouzikian to discuss the incident last week at St. Mary's Church where a young man by the name of Victor Petrescu was caught vandalizing the cross-stone in the courtyard dedicated to the 1700<sup>th</sup> anniversary of the adoption of Christianity in Armenia.

Joining the Prelate at the meeting were Pastor of St. Mary's Church Rev. Fr. Vazken Atmajian, and Executive Council members Mr. Levon Kirakosian, Esq., Mr. Garo Eshgian, Mr. George Chorbajian, and Mr. Toros Kejejian.

Chief De Pompa and the Sergeants reported on the result of their questioning of the suspect and gave a brief background on the individual, noting that he has been in trouble with the law before and is no stranger to the police. As the investigation continues, the police department will issue a statement on any new information in due time.

The Prelate and guests further discussed details of the case such as if it was premeditated and if it falls under the category of a hate crime.

The Prelate thanked Chief De Pompa and the Sergeants for their time and efforts in pursuing this case, and requested to be kept abreast of new information as the case develops.

On the afternoon of Wednesday August 18<sup>th</sup>, the Prelate learned from Chief De Pompa that the Los Angeles County District Attorney's office has reviewed the case and will make an amendment to reclassify it as a hate crime.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՐՃԻԼ ԿՈՐՔԻԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՑՈՒՑԱԿԱՐՎԱՐԸ՝ MOCAԻ ՄԵԶ**

Նախօրօք ճշդուած ժամանութեամբ մը, Թեմիս բարեխևամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի, 19 Օգոստոսի յետմիջօրէին այցելեց Լու Անճելըսի Արդի Արուեստներու

Թանգարանը, ուր տեղի կ'ունենայ աշխարհահեռչակ գեղանկարիչ Արշիլ Կորդիի (Ոստանիկ Ասոյեան) գործերու ցուցահանդեսը: Առաջնորդ Սրբազնին կ'ընկերանային ցուցահանդեսի կազմակերպիչ յանձնախումբի անդամներէն ու զօրակիցներէն Տեարք Յրայր եւ Կահան Կարպուշեան:

Առաջնորդ Սրբազնի դիմաւորուեցաւ թանգարանի գլխաւոր պատասխանատուներէն Փոլ Շիմըլի եւ թանգարանի բարգաւաճման բաժանմունքի վարիչ Էտըմ Կրոսի կողմէ: Առաջնորդ Սրբազնի իր գևահատանքն ու գոհուսակութիւնը արտայայտեց այս ցուցահանդեսին կազմակերպման համար: Ծանօթ է, որ Յեղասպանութենէն Վերապրած Կորդիի գործերուն մեջ արտայայտութիւն գտած են իր ու հայութեան տառապանքները, անկախ այն իրողութենէն, որ հայազգի նկարիչը կը նկատուի ամերիկեան ցամաքամասի վրայ ռահվիրա մը եւ գագաթ մը՝ արուեստի աշխարհին մեջ:

Առաջնորդ Սրբազնի, ցուցադրուած գործերը դիտելէ Եսք, հանդիպում ունեցաւ յիշեալ պատասխանատուներուն հետ: Էտըմ Կրոս, որ նաեւ պատասխանատուն է հայ գաղլութիւն հետ կապերուն, յիշեցուց, որ ցուցահանդեսը պիտի շարունակուի մինչեւ 20 Սեպտեմբեր. դիւրացնելու եւ քաջալերելու համար արուստասերներու այցը, թանգարանը հաստատած է կտրօններու դրութիւն մը (Coupon), ինչ որ առիթ կու տայ երկու անհատներու՝ մեկ այցեգինով մուտք գործել ցուցահանդեսի սրահը:

Կը քաջալերենք մեր ժողովուրդը, որպեսզի այցելէ ցուցահանդեսը եւ ծանօթանայ մեծ արուեստագետի գործերուն:

## PRELATE VISITS ARSHILE GORKY EXHIBIT AT MOCA



On Thursday, August 19<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the Museum of Contemporary Art to view the Arshile Gorky exhibit. He was accompanied by "MOCA Friends of Arshile Gorky" committee member Mr. Hrair Garboushian and collaborator Mr. Vahan Garboushian.

Upon his arrival at MOCA the Prelate was greeted by Chief Curator Mr.

Paul Schimmel and Associate Director of Development Mr. Adam Gross, whom he thanked once again for his initiative in organizing the exhibit which features nearly 200 of the artist's works.

After viewing the exhibit, the Prelate had a meeting with Mr. Adam Gross, Associate Director of Development at MOCA. Mr. Gross noted that

MOCA is extending an offer of two admissions for the price of one to the exhibit through September 20. The 2 for 1 admission coupon can be downloaded from the news section of our website, or by clicking the following link [Click Here to Download 2 for 1 Admission Coupon](#). We encourage our parishioners to take advantage of this promotion and visit MOCA to view the works of Arshile Gorky.

\*\*\*

## ԱՌԱՋԱՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՔՈՒԵՅԹԻ ՀԱՅԿ. ՎԱՐԺԱՐԱՆԻ 50-ԱՄԵԱԿԻ ՅԱՆՉԱԽՈՒՄԲԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՉՆԵՐԸ



Զուեյթի հայկական մարժարանը այս տարի կը բոլոր իր կեանքի առաջին կես դարը: Ուսկեայ յոբելեանին առիթով, Զուեյթի մեջ թէ այլուր, նախատեսուած են տօնախսմբութիւններ ու հանդիսութիւններ:

Վարժարանի նախկին սաներէն ու բարեկամներէն մեր ափերը բնակութիւն հաստատած հայորդիներ կազմած են 50-ամեակի յանձնախումբ մը, որպեսզի իբրեւ

Երախտագիտութեան արտայայտութիւն՝ իրենց լուման նուիրաբերէն Վարժարանին ու վեր առնեն անոր դերակատարութիւնը:

Յանձնախումբի անդամներէն՝ Տիկնայք Մարալ Մանուկեան, Այտա Գամարեան եւ Տիար Քրաչ Գալուստեան Ճինգշաբթի, 19 Օգոստոսի յետմիջօրէին, այցելութիւն մը տուին Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցան Թեմիս բարեխնամ

Մարտիրոսեանի կողմէ: Անոնք ընդհանուր գիծերու մեջ տեղեկութիւններ տուին այն ձեռնարկներուն ու հանդիսութիւններուն մասին, որոնք կը նախատեսուին յառաջիկայ ամիսներուն:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց յանձնախումբին մարմնաւորումը եւ բարձր գևահատեց նախկին սաներուն պատրաստակամութիւնը՝ նիւթապես ու բարոյապես նեցուկ կանգնելու Զուեյթի եւ Ծոցի երկիրներու մեր Թեմի

հովանին տակ գործող հայկական կրթօճախին: Ան գոհունակութիւն յայտնեց, որ անցեալ տասնամեակներուն արձանագրուած տագևապալի հանգուաններուն հետքերը թօթափուած են ու վարժարանը վերահաստատած է իր առաջելութիւնը: Առաջնորդ Սրբազնը նաեւ իր օրինութիւնը տուաւ յանձնախումբի աշխատանքներուն եւ փոխանցեց անոնց նեցուկ կանգնելու Ազգ. Առաջնորդարանի պատրաստակամութիւնը:

## KUWAIT ARMENIAN SCHOOL 50<sup>TH</sup> ANNIVERSARY COMMITTEE MEMBERS VISIT THE PRELACY

In the coming months, the 50<sup>th</sup> anniversary of the Armenian School of Kuwait will be ceremoniously celebrated both in Kuwait and in communities around the world. Committees have been formed in various communities by alumni and friends of the school to assist in the planning of the celebrations.

On Thursday, August 19<sup>th</sup>, 2010, members of the local 50<sup>th</sup> anniversary committee visited the Prelacy to meet with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Members Mrs. Maral Manoukian, Mrs. Aida Kamarian, and Mr. Hratch Kaloudsian reported to the Prelate on the events and activities that are planned for the near future.

The Prelate commended the members for their efforts in providing moral and financial support to the school, and expressed the support of the Prelacy in their mission.

\*\*\*

## ԱՌԱՋԱԿԱՆ ՄԵՐԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼՈՍ ԱՆՁԵԼԸՍԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՇԽՆԵՐԸ

Լոս Անձելըսի Իրանահայ Միութեան վարչութեան ներկայացուցիչները Ազգ. Առաջնորդարան այցելեցին Երեքարքի, 17 Օգոստոսի Երեկոյեան, ծանօթացման հանդիպում մը ունենալու համար թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի հետ: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր վարչութեան ատենապետուիհին՝ Տիկին Պերճուիի Ղեւեան, որուն կ'ընկերանային վարչութեան անդամներ՝ Բելլա Սարգսեան, Արք Յարութիւնեան, Ռոստոմ Թորոսեան, Թոմիկ Ալեքսանեան եւ Վուճ Գրիգորեան: Ներկայ Եղան Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւներէն՝ Արք. S. Կոմիտաս Զինյ. Թորոսեան, Ազգային Վարչութեան ատենապետուիի Տիկին Ռիմա Պօղոսեան եւ անդամներ՝ Տեարք Լեւոն Կիրակոսեան ու Կարօ Էջկիեան, ինչպէս նաեւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ազգային երեսփոխաններէն Տիար Իսահակ Գազանճեան:

Փոխադարձ ծանօթացում ետք, Առաջնորդ Սրբազնը ողջունեց վարչականներուն ներկայութիւնը Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ, որուն հետ Իրանահայ Միութեան կապերը միշտ ալ եղած են սերտ: Ան

մաղթեց, որ յառաջիկային եւս, գործակցութիւնը շարունակուի աւելի սերտ կերպով:

Յիւր Ներկայացուցիչները ընդհանուր գիծերու մեջ Առաջնորդ Սրբազնին Ներկայացուցին իրենց աշխատանքի դաշտերն ու անմիջական ծրագիրները: Անոնք նաեւ յայտնեցին, թէ միութեան նորակերտ կեղրոնին շինարարական աշխատանքները կը մօտենան իրենց աւարտին, եւ փափաք յայտնեցին, որ Առաջնորդ Սրբազնն ու Ազգ. Վարչութեան անդամներ այցելեն նոր շենքը:

Առաջնորդ Սրբազնը բարձր գևահատեց Իրանահայ Միութեան գործունեութիւնը, մասնաւոր հայկական աւանդներուն հաւատարմութիւնն ու հայկական արժեքներու պահպանման նախանձախնդրութիւնը, եւ բարի երթ մաղթեց Վարչութեան եւ գործակիցներուն: Ան նաեւ յուշանուերներ յանձնեց հիւրերուն:

## PRELATE WELCOMES REPRESENTATIVES OF THE ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES



On Tuesday, August 17<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives of the Armenian Society of Los Angeles. The delegation was led by Board of Directors Chair Mrs. Berjouhi Ghevian, accompanied by members Bella Sarkissian, Arke Haroutunian, Rostom Torossian, Tomik Alexanian, and Vrej Krikorian.

Joining the Prelate at the meeting were Pastor of St. Mary's Church Rev. Fr. Gomidas Torossian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian, Executive Council members Mr. Garo Eshgian and Mr. Levon Kirakosian, and St. Mary's Church Delegate Mr. Isahak Kazangian.

The Prelate welcomed the guests, noting that the Armenian Society of Los Angeles has a long history of collaboration with the Prelacy and expressing confidence that the close relationship will continue for years to come.

The guests presented the Prelate with an overview of their planned future activities, among them the construction of their new center which is nearly completion, and expressed their wish for the Prelate and Executive Council to visit the center.

The Prelate commended the mission of the organization to preserve and develop the Armenian culture and traditions and to serve the Armenian people

and nation. He wished the members success in their endeavors and presented them with mementos at the conclusion of the meeting.

\*\*\*

## ՄԻԶԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԾՐՁԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ



Միջին Արեւելքի  
Ուղղափառ Եկեղեցիներու՝  
Ղըպտի Ուղղափառ, Ասորի  
Ուղղափառ եւ Յայց.  
Առաքելական Եկեղեցիներու  
Արեւմտեան Միացեալ  
Նահանգներու  
Առաջնորդները Երեքշաբթի,  
17 Օգոստոսին ունեցան  
իրենց հերթական  
հանդիպումը, օրակարգի  
վրայ ունենալով միացեալ  
ծրագիրներ ու  
գործակցութեան

### Նախագիծեր:

Յանդիպումը տեղի ունեցաւ Ասորիներու Ս. Եփրեմ Մայր Եկեղեցւոյ մէջ, Պըրաբէսք, հիւրընկալութեամբ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Եուճին Քափլան Արքապիսկոպոսին:

Ժողովական աշխատանքներու սկսելէ առաջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ղըպտի Ուղղափառ համայնքի Առաջնորդ Գերշ. S. Մրապիոն Եպիսկոպոս, Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Եուճին Քափլան Արքապիսկոպոս եւ հոգեւորականները միացեալ աղօթքի պահ մը ունեցան, իրաքանչիլը իր լեզուով Ս. Աստուածամօր նուիրուած շարականներ երգելով ու աղօթելով:

Առաջնորդ Արքազան Յօր կ'ընկերանային Քրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակի Վարիչներէն՝ Յոզէ. S. Պարթեւ Վիդ. Կիւիմեան եւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւներէն՝ Արք. S. Վազգէն Քինյ. Աթմաճեան:

Ժողովը գեկուցումներ լսեց Կիրակնօրեայ դպրոցներու եւ Երիտասարդական խմբակներու համատեղ գործունեութեան ու ծրագիրներուն մասին, կատարելով իրագործումներուն արժեւորումը, եւ մշակեց յառաջիկայ ծեռևարկներու ծրագիրը:

Ժողովը նաեւ որոշեց յաւելեալ մղում տալ Երիտասարդական խմբակներու գործունեութեան:

Որոշուեցաւ այս տարի եւս կատարել հոգեւորականաց համատեղ Ս. Պատարագ, Ասորի Եկեղեցւոյ հիւրընկալութեամբ, Երեքշաբթի 28 Սեպտեմբերի առաւօտուն:

Արծարծուեցան նաեւ Ամերիկայի մէջ Ուղղափառ Հաւատքն ու Կարդապետութիւնը յատկապէս Երիտասարդներու մէջ տարածելու միջոցները, յատկապէս օգտագործելով՝ »Լոկոս« Ուղղափառ Եկեղեցւոյ պատկերասփիւրի կայանը, որուն կարելի է հետեւիլ նաեւ համացանի ճամբով ([www.logoschannel.com](http://www.logoschannel.com)): Այս նպատակով Եղան խորհրդատութիւններ եւ ճշդուեցան համապատասխան քայլեր:

Ժողովական աշխատանքներու աւարտին տեղի ունեցաւ սիրոյ սեղան:

## MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS



On Tuesday, August 17<sup>th</sup>, 2010, the Council of Oriental Orthodox Bishops, comprised of spiritual leaders and clergy from the Coptic, Syriac, and Armenian Churches, met to discuss upcoming joint activities.

The meeting was held at St. Ephraim Syriac Orthodox Cathedral in Burbank, hosted by H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan.

The day began with the opening prayer led by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, head of the Syriac Church, and H.G. Bishop Serapion, head of the Coptic Church, and with the participation of clergy from the three churches.

Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Fr. Vazken Atmajian accompanied the Prelate.

Council members discussed the activities of the Sunday Schools and youth groups, and drafted future events, among them the annual joint Divine Liturgy which will be celebrated this year on Tuesday, September 28<sup>th</sup>, hosted by the Syriac Church.

Members also discussed new means of spreading and promoting the Orthodox faith, particularly among the youth, through mediums such as Logos TV of the Coptic Church, which can also be viewed through their website at [www.logoschannel.com](http://www.logoschannel.com).

A reception followed.

\*\*\*

## Ս. ԱՍՏՈՒԹԱԾԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

### **ԱՌԱՋԱՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ ԵՒ ԽԱՂՈՂՈՐՅՆԵՔ ԿԱՏԱՐԵՑ ԿԼԵՏՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԹԱԾԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ**



Ս. Աստութածնայ Վերափոխման տօնին առիթով, Շաբաթ 14 եւ Կիրակի 15 Օգոստոսի շաբաթավերջին, տօնական մթոնորտ ստեղծուեցաւ Կլետտեյլի Ս. Աստութածն Եկեղեցոյ յարկին տակ:

Շաբաթ Երեկոյ, տեղի ունեցաւ Նախատօնակը: Քահանայ հայրերը եւ սարկաւագները, աղօթքներով, սաղմոսներով եւ մեր հոգեպարար

շարականներով, գեղեցիկ պահ ապրեցան, իսկ այսուհետեւ մեր բարեպաշտ հաւատացեալ ժողովուրդին հնարաւորութիւն տրուեցաւ ունենալու խոկումի, աղօթքի եւ հոգեւոր Երգեցողութեան պահ՝ մինչեւ ուշ գիշեր:

Կիրակի օրը, Օգոստոս 15-ի առաւոտեան, մեր բարեպաշտ ժողովուրդը, իսանդավառութեամբ Եկեղեցի հասաւ: Նկատելի էր Երկիւղածութիւնը եւ ջերմեռանդութիւնը մեր հաւատացեալ ժողովուրդին, որ խոր ակնածանք եւ մեծ յարգանք կը տածէ դեպի Ս. Կոյսը: Առաւոտեան, ժամը 9:30-ին սկսաւ ժամերգութիւնը՝ տօնին յատուկ շարականներով, իսկ խորանը զարդարուած էր ծաղիկներով: Ս. Պատարագը սկսաւ «Հրաշափառ»ի Երգեցողութեամբ. պատարագին էր Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ թափօրով, խաչի, մոմակիրներու, սարկաւագներու, բուրվառակիրներու ուղեկցութեամբ մուտք գործեց Եկեղեցի ու յառաջացաւ դեպի խորան: Հոգեզմայլ էր պատարագը հաւատացեալ ժողովուրդին համար, որ նաեւ լսեց Առաջնորդ Սրբազնին պատգամը: Սրբազն Հայրը գեղեցկօրէն դրուատեց Մարիամ Աստութածնի՝ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մօր առաքինութիւնները,, Նշելով, որ ան Ս. հոգիով յղացած եւ մաքրամաքուր կեանք մը կերտած էր, եղաւ չափանիշը մայրութեան, ժումկալութեան, մաքրութեան, զոհողութեան, խոնարհութեան եւ մաքրակեցութեան: Առաջնորդ Սրբազն Հայրը նաեւ իր պատգամին մեջ նշեց հայ կնոջ եւ մօր դերը՝ մեր անցեալի եւ Ներկայի կեանքին մէջ, ընդգծելով, որ ան միշտ եղած է պատևէի վրայ, ըլլայ այդ օրհասական պահ կամ փառաւոր ժամանակահատուած, եւ ի զուր չէ որ Մեծի Տան Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Ս. Արք Ա. Վեհափառ Հայրապետը այս տարին հոչակած էր «Հայ Կնոջ Տարի»: Այս առթիւ, Առաջնորդ Սրբազն Հայրը կոչ ուղեց մեր ժողովուրդի մայրերուն եւ քոյրերուն, որ Մարիամ Աստութածնը իրենց համար դառնայ լոյս եւ փարոս իրենց կեանքին

ընթացքին: Այս բոլորը խոկումի գեղեցիկ պահ մը շնորհեցին հաւատացեալ ժողովուրդին:

Իսկ պատարագի աւարտին, խաղողի օրինութիւն տեղի ունեցաւ, ձեռամբ՝ Առաջնորդ Սրբազն Յօր, եւ Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Տիկնանց Սիութեան կողմէ բաշխուեցաւ հաւատացեալներուն:

## PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AND BLESSES GRAPES AT ST. MARY'S CHURCH ON THE FEAST OF THE ASSUMPTION



On Sunday, August 15<sup>th</sup>, 2010, the Feast of the Assumption of the Holy Mother of God was ceremoniously celebrated in all Prelacy Churches with Divine Liturgy and the blessing of grapes.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy at St. Mary's Church in Glendale where hundreds

of faithful had gathered to participate in the spiritually uplifting service and in the festivities of the day.

With the singing of the "Hrashapar" hymn, the Prelate entered the church and ascended the altar to celebrate Divine Liturgy.

In his sermon, the Prelate exalted the life and virtues of St. Mary and her role in God's great plan to save mankind. Through her purity, righteousness, humility, and sacrifice, she became the ideal for what it means to be a mother, said the Prelate, and encouraged the women in attendance to look to St. Mary as role model and guide.

The Prelate also lauded the role Armenian woman have had and continue to have in our religious and national life, noting how very fitting it is that H.H. Catholicos Aram I has dedicated this year to women by proclaiming 2010 the Year of the Armenian Woman.

At the conclusion of the service, the Prelate conducted the blessing of grapes, which were then distributed to the faithful.

\*\*\*